ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Արարատ համայնքի Արարատ քաղաքի Մ. Գորգիսյանի անվան թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում հոգեբանի 1 դրույքով թափուր աշխատատեղը համալրելու համար:

Հոգեբանի համար նախատեսված վարձատրությունը որոշվել է ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակով: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման և հարցազրույցի փուլերը անցկացվում են ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 22.10.2024թ. թիվ 1981-Ա/2 հրամանի մշակված հարցաշարերի: Հարցազրույցն անցկացվում է յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տվյալ թափուր պաշտոնի նկարագրի պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1.դիմում /Ձև1/ ,

2. կրթության մասին փաստաթուղթ /դիպլոմ/ ,

3. անձը հաստատող փաստաթուղթ,

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ/առկայության դեպքում/ ,

5. ինքնակենսագրություն /Ձև 4/,

6. մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,

7.այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8.Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/դրանց առկայության դեպքում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են www.araratcity.am կայքում հայտարարության հրապարակման օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում՝ 19.02.2025թ-ից մինչև 18.03.2025թ. ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-16:00-ը՝ հետևյալ հասցեով՝ **քաղաք Արարատ, Չարենցի 8:**

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի մարտի 21-ին ժամը 11:00–ին «Արարատ համայնքի Արարատ քաղաքի Մ. Գորգիսյանի անվան թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում:

Հասցե՝ Արարատ համայնք, ք. Արարատ, Չարենցի 8:

Էլեկտրոնային հասցե՝ ararat.tiv2@mail.ru

Տեղեկությունների համար զանգահարել 093-52-58-18 հեռախոսահամարով: